ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ն. Զաքարյան

գծով

30 08 2022թ.

Ստուգված է՝

Ուսումնական աշխատանքների

տնօրենի տեղակալ՝

Ա. Նազարյան

30 08 2022թ.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԱԴԱՄՅԱՆ

2022 – 2023 ՈՒՍՏԱՐԻ

2022-2023 ուսումնական տարում նախատեսված աշխատանքների հիմնական ուղղությունները

Բնագիտական գրագիտության ձևավորումը, բնության օրինաչափությունները ճանաչելու և ներդաշնակ ապրելու արվեստին տիրապետելը, առողջ ապրելակերպը, բնութ-յան և շրջակա միջավայրի պահպանությունը կարևոր արժեքներ են, որոնք պահան-ջում են հետևողական աշխատանք բնագիտական առարկաների ուսուցիչների կողմից: Դրա համար անհրաժեշտ է որակական նոր մակարդակի վրա բարձրացնել քի-միայի, կենսաբանության, ֆիզիկայի և աշխարհագրության դասավանդումը դպրո-ցում: Մեծացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ օգտագործելով մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Սովորողների մոտ ձևավորել ստացած գիտելիքները տարբեր իրավիճակներում կիրառելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողություններ: Նպաստել բնության պահպանության գիտակցության ձևավորմանը, դիտողականության, տրամաբանական մտածողության զարգացմանը: Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան: Ուսումնասիրել և գործնականում կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, զեկուցումների և էլեկտրոնային դասերի միջոցով: Ուշադրության կենտրոնում պահել համացանցի aniedu.am, armedu.am, ktak.am և այլ կրթական կայքերի, մասնագիտական ամսագրերի ու թերթերի նյութերի ուսումնասիրությունը: Հեռավար ուսուցումը գրագետ կազմակերպելու նպատակով մասնակցել վերապատրաստումների և վեբինարների: Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ, բացօթյա դասեր, որոնք հնարավորություն կտան խորացնել սերն ու հոգատարությունը բնության նկատմամբ, կձևավորեն նոր կարողություններ և հմտություններ: Ամենօրյա աշխատանքով պետք է ամրագրել ու զարգացնել մեր ինքնատիպությունը, հավատարիմ մնալով քաղաքակրթության արժեքներին:

Բնագիտական առարկաների մեթոդմիավորման

աշխատանքային պլան

No	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատարման պատասխանատուն	Նշումներ
1	Բնագիտական առարկաների մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում և կազմակերպում	օգոստոս-սեպտեմբեր	մեթոդմիավորման նախագահ	
2	Համադպրոցական ուսումնական պլանի՝ պետական և դպրոցական բաղադրիչների բաշխման մասին տեղեկատվություն	օգոստոս	փոխտնօրեն մ/մ նախագահ	
3	2022-2023ուսումնական տարվա համադպրոցական ուսումնա-դաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի (պլանի) քննարկում	օգոստոս	փոխտնօրեն մ/մ նախագահ	
4	Ուսումնական ծրագրերի, մեթոդական նամակների ուղեցույցների, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների քննարկում	օգոստոս	մ/մ անդամներ	
5	Հանձնարարել ուսուցիչներին ուսումնասիրել նոր հրատարակված դասագրքերի ուսումնական ծրագրերի և մեթոդական ուղեցույցների համապատասխանությունը	օգոստոս	մ/մ նախագահ	
6	Բնագիտական առարկաների մեթոդ-միավորման աշխատանքային պլանի քննարկում և հաստատում	29.08.2022թ	փոխտնօրեն մ/մ անդամներ	
7	Քննարկել և հաստատել բնագիտական առարկաների ուսուցիչների կողմից ներկայացված առարկայական թեմատիկ պլանները՝ կազմված ըստ պետական ուսումնական պլանների, առարկայական չափորոշիչների և ծրագրերի:	29.08.2022թ	փոխտնօրեն մ/մ նախագահ	
8	Քննարկել և հաստատել , թեմատիկ և կիսամյակային աշխատանքների	օգոստոս	մ/մ նախագահ մ/մ անդամներ	

	անցկացման կարգը			
9	Վիրուսային համավարակների պայմաններում, հանրակրթական ու-սումնական հաստատություններում աշխատանքների կազմակերպման ուղեցույցի դրույթների քննարկում և իրագործում	օգոստոս	Փոխտնօրեն մ/մ նախագահ մ/մ անդամներ	
10	Ապահովել հակահամաճարակային կանոնների պահպանումը և ուղեցույ-ցով նախատեսված աշխատանքների իրականացումը	Տարվա ընթացքում	մ/մ անդամներ	
11	Ուսումնական կաբինետների նորացում և կահավորում	օգոստոս-սեպտեմբեր	մ/մ անդամներ	
12	ՈՒսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժական և առարկայական նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, զեկուցումներ, մասնագիտական և մեթոդական խորհրդատվություններ	ուսումնա-կան տարվա ընթացքում	մ/մ նախագահ	
13	Կազմակերպել փոխադարձ դասա-լսումներ մանկավարժական առաջավոր փորձի քննարկման և ներդրման նպատակով	տարվա ընթացքում	մ/մ անդամներ	
14	Նոր ուսուցիչների մասնագիտական կարողությունների և դասավանդման որակի բարձրացման համար կատարել համապատասխան աշխատանքներ:	ուսումնական տարվա ընթացքում	փոխտնօրեն մ/մ նախագահ	
15	Ակտիվորեն համագործակցել ktak.am և հեռավար ուսուցման գործիքակազմը ներկայացնող կայքերի հետ	տարվա ընթացքում	մ/մ անդամներ	

16	Համացանցի drive.google.com, heravar.armedu.am, arm.edu channel կայքէջերի մշտադիտարկում անց-կացնել	տարվա ընթացքում	մ/մ անդամներ	
17	Բնագիտական առարկաների մեթոդ-միավորման ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում	ուս.տարվա ընթացքում	մ/մ նախագահ	
18	Ծրագրերի կատարողականի ստուգում	ուս.տարվա ընթացքում	մ/մ նախագահ	
19	Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բուսաբանական այգի, բնության թանգարան, օդերևութաբանական կայան,կենդանաբանական այգի	ուս. տարվա ընթացքում	մ/մ անդամներ	
20	Հարստացնել տեսադարանը, որտեղ ընդգրկված են տարբեր թեմաների վերաբերյալ տեսանյութեր	տարվա ընթացքում	մ/մ նախագահ ուսուցիչներ աշակերտներ	
21	Հայտագրվել և մասնակցել ԿԳՄՍ նախարարության կողմից կազմա-կերպված դասընթացներին:	տարվա ընթացքում	մ/մ անդամներ	
22	Համագործակցել ՀՊՄՀ կենսաբանա-կան ֆակուլտետի հետ՝ ուսանողների ակտիվ մանկավարժական պրակտի-կան լիարժեք իրականացնելու նպա-տակով: Նպաստել, որ այն խթան հանդիսանա ուսանողների հետագա մանկավարժական գործունեության համար:	տարվա ընթացքում	մ/մ նախագահ մ/մ անդամներ	
23	Ակտիվորեն մասնակցել ԿԳՄՍ նախա-րարության կողմից արտոնագրված կազմակերպությունների նախաձեռնած	ուստարվա ընթացքում	մ/մ անդամներ	

	վերապատրաստումներին՝պարտադիր ատեստավորման համար:			
24	Բնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն (դասալսումներ, զեկուցումներ, գրավոր աշխատանքներ)	ապրիլ	տնօրենություն	
25	Կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ 9—րդ դաս. աշակերտների հետ ավարտական քննություններին պատշաճ նախապատ-րաստվելու նպատակով:	Հունվար-մայիս	մ/մ անդամներ	
26	Անցկացնել գիտելիքների ստուգում 7-8-րդ դասարաններում բոլոր բնագիտա-կան առարկաներից	մայիս	բնագիտական մեթոդմիավորում	
27	2022-2023 ուսումնական տարվա ըն-թացքում կատարված աշխատանքնե-րի վերլուծություն և ամփոփում	մայիս	տնօրենություն մ/մ անդամներ	

Բնագիտական առարկաների մեթոդմիավորման տարեկան աշխատանքային պլան-ծրագիրը բխում է Երևանի Պ. Յավորովի անվան թիվ 131 հիմնական դպրոցի 2022-2023 ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից: Ըստ ամիսների մ/մ աշխատանքային պլանի բովանդակությունը կարող է վերանայվել, լրացվել և խորացվել: